«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Սովորողի ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը տվյալ առարկայի դասավանդման համատեքստում»

Առարկան՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Ներսիսյան Թերեզա

Ուսումնական հաստատություն՝ Խ.Աբովյանի անվան թիվ 84 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Հետազոտական աշխատանք 2

Ներածություն 3

Սովորողի ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը տվյալ առարկայի դասավանդման համատեքստում 4

Ինչի՞ մասին ես ուզում սովորել 4

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը 5

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին 7

Եզրակացություն 14

Օգտագործված գրականության ցանկ 15

Հետազոտական աշխատանք

Թեմա- Սովորողի ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը տվյալ առարկայի դասավանդման համատեքստում

Ինչի՞ մասին ես ուզում սովորել- Որո՞նք են սովորողի ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը առարկայի դասավանդման համատեքստում:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը- ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատատարելագործման համար: Պետք է մշտապես հիշել, որ ոչինչ հաստատուն չէ, բացի փոփոխությունից, քանզի ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերն ու մեթոդները ևս կապված են հասարակական կյանքի պատմական զարգացման հանգամանքների և մանկավարժական նորագույն փորձի ու նվաճումների հետ:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին- Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է : Որպեսզի աշակերտն ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ:Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը: Ինքնուսուցման պարագայում սովորողն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը: Ինքնուրույն ուսումնական աշխատանքները լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը՝ մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով:

Խաչվող հասկացությունները՝

- մանկավարժական գործընթացի և մանկավարժական խնդիր,
- սովորողների ինքնուրույն զարգացում և փուլային բնույթ,
- ինքնուրույնություն և ազատություն

Հետազոտության թեմային առնչվող բնագավառները՝

1. Մանկավարժություն
2. Տրամաբանություն

Ներածություն

Թեմայի կարևորությունը: Դպրոցականների ուսուցման գործընթացում մեծ դեր ու նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Աշակերտների ինքնուրույն գործունեությունը կարևոր է ինչպես դպրոցում, այնպես էլ կյանքի բոլոր բնագավառներում: Ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Ինքնուրույն գործունեության նպատակը նոր սերնդին կյանքին, աշխատանքին նախապատրաստելն է: Ինքնուրույն գործունեության նպատակը բոլոր ժամանակներում որոշվում է հասարակական պահանջներով, գիտատեխնիկական առաջընթացի զարգացումով, մանկավարժության տեսության և պրակտիկայի զարգացման մակարդակով, ուսումնական հաստատություններով և ուսուցիչների զարգացման մակարդակով: Ինքնուրույն գործունեության նպատակի սահմանման հարցը որքան հին է, այնքան էլ արդիական է:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Սույն հետազոտության օբյեկտ է հանդիսացել աշակերտների ինքնուրույն գործունեությունը դպրոցում, իսկ առարկան՝ Աշակերտների ինքնուրույն գործունեության սահմանումն է արդի ժամանակաշրջանում:

Հետազոտության նպատակը: Աշակերտների ինքնուրույն գործունեության նպատակի սահմանումն է արդի ժամանակաշրջանում՝ կարևորելով այն արժեքավոր մտքերը, գաղափարները, որոնք այսօր կարելի է արդյունավետ կիրառել մանկավարժության տեսության մեջ և պրակտիկայում :

Հետազոտության կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Սովորողի ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը տվյալ առարկայի դասավանդման համատեքստում

Դասարաններում ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր ու նշանակություն ունի: Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Տարրական դասարանում ինքնուրույն աշխատանքի անցկացումն ունի որոշակի առանձնահատկություններ:

ՈՒսուցիչները հաճախ կիրառում են աշակերտների ակտիվությունը խթանող հնարներ, և համարում են, որ իրենք կազմակերպեցին ինքնուրույն աշխատանք: Անկասկած, այդ հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են աշակերտներին ինքնուրույն աշխատել,բայց այն դեռ ինքնուրույն աշխատանք չէ: Նախ տեսնենք, թե ինչ են իրենցից ներկայացնում «ինքնուրույնություն» և «ինքնուրույն աշխատանք» արտահայտությունները:

Ինքնուրույնությունը անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը՝ ուսումնական աշխատանքի ձև: Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատական որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը: Կարելի է ասել, որ ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Ինչի՞ մասին ես ուզում սովորել

Գաղտնիք չէ, որ արդի ժամանակաշրջանում տարրական և միջին դասարաններում ուսումնասիրության միջև գոյություն ունի անջրպետ: Այս երևույթի պատճառները բավականին շատ են, սակայն դրանցից մեկն էլ կարելի է համարել տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների՝ կրտսեր դպրոցականների ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձևավորման վրա ոչ բավարար ուշադրությունը: Նույնիսկ բազմաթիվ փորձառու ուսուցիչներ կազմակերպելով սովորողների ուսումնական գործունությունը՝ չեն խթանում նրանց

ակտիվության զարգացմանը: Այդպիսի ուսուցիչներից աշակերտը կարող է օգնություն ստանալ առաջին իսկ դժվարության դեպքում: Այդպես աշակերտն այլևս առանձնապես ակտիվություն չի դրսևորում խնդիրների լուծման նպատակով ինքնուրույն ուղիների որոնման գործում: Աշակերտներին տրվում է պատրաստի արդյունքը, չնայած որ նա կարող է ինքնուրույն որոնել այն: Երբեմն էլ ուսուցիչը չի հետաքրքրվում, թե ինչպես է աշակերտը գրել հարցի պատասխանը, այլ սահմանափակվում է արդյունքների ճշտության ստուգումով, ինչը չի բարձրացնում աշակերտի հետաքրքրությունը՝ առաջադրանքի կատարման համար տարբեր ուղիների որոնման գործում: Տարրական դասարաններում դասերի ընթացքում գերակշռում է ուսուցման ճակատային (ֆրոնտալ) ձևը, երբ աշակերտների գործողությունները հիմնականում կախված են ուսուցչի անմիջական հրահանգներից: Այդ գործողությունները հիմնականում կատարվում են գրատախտակի մոտ: Այսպիսի գործողությունները արգելակում են երեխաների զարգացումը, և արդեն V դասարանում սովորողները հայտնվում են անօգնական վիճակում՝ գրքի շուրջ իրականացվող ինքնուրույն աշխատանքի, առաջադրանքների ինքնուրույն լուծման, ստեղծագործական բնույթի աշխատանքների կատարման ընթացքում: Առաջադրանքների ծավալը նրա ուժերից վեր է դառնում, աշխատանքի տեմպը՝ դանդաղ:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը

Սովորողների ինքնուրույն մտածողության ձևավորումն ու զարգացումը միշտ էլ համարվել են ուսուցման գործընթացի կարևոր նպատակները: Դեռևս Կ. Դ. Ուշինսկին լուրջ ուշադրություն էր դարձնում աշակերտի ինքնուրույն մտածողության զարգացմանը. «Սովորողի մտքի ինքնուրույնությունը ցանկացած արդյունավետ ուսուցման միակ ամուր հիմքն է»: Այս խնդրի լուծման ճանապարհին մեծ դեր ունի պրոբլեմային ուսուցումը, որի բաղադրամասերն են՝

1) պրոբլեմային իրավիճակների ստեղծումը և իմացական խնդրի ձևակերպումը,

2) սովորողի մոտ ինքնուրույն մտածողության խթանումը, որն ուղղված կլինի իմացական խնդրի լուծմանն ու նոր գիտելիքների ձեռք բերմանը,

3) նոր գիտելիքների ընդլայնումը, խորացումն ու ճշտումը:

Ըստ Ս. Ի. Օժեգովի՝ պրոբլեմը բարդ հարց կամ խնդիր է, որը պահանջում է լուծում, հետազոտում: Սա նշանակում է, որ պրոբլեմային ուսուցումը ոչ թե պատրաստի գիտելիքների վրա հենված կրթությունն է, ա յլ լուծման, հետազոտման քայլեր առաջադրող գործընթացը: Եթե աշակերտն ունի այս կամ այն հարցի պատրաստի պատասխանը, ապա ունեցած գիտելիքները հիշելուց և վերարտադրելուց բացի նրանից մտածողության ջանքեր չեն պահանջվում:

Պրոբլեմային իրավիճակը պետք է ունենա նաև հոգեբանական էլեմենտ՝ փաստերը պետք է լինեն նոր և տպավորիչ, իսկ իմացական խնդիրը՝ անսովոր, արտառոց, հետաքրքրագրգիռ, այն պետք է հետաքրքրի սովորողին և նրա մեջ առաջացնի իմացական որոնման ձգտում: [1]

Ինչպես ցանկացած ուսումնական գործընթացի ժամանակ, այնպես նոր գիտելիքներ ձեռք բերելու, տեղեկատվությունդ սեփական, ինքնուրույն մտավոր գործունեության ճանապարհով ցուցադրելու և կիրառելու առիթ: Ուսումնական նյութի բովանդակությամբ և սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված առաջարկվում են պրոբլեմային իրավիճակների ստեղծման տարբեր եղանակներ: Մանկավարժական իրավիճակը մանկավարժական գործընթացի, մանկավարժական իրողության բաղադրամասն է, որի օգնությամբ մանկավարժը ղեկավարում և կարգավորում է կրթադաստիարակչական գործընթացը:[2]

Մանկավարժական իրավիճակները բացահայտում և ամփոփում են մանկավարժական գործընթացի, համակարգի առավելությունները և թերությունները: Նրանք նշանակալի դերակատարում ունեն յուրաքանչյուր մանկավարժի գործունեության մեջ, նրա մասնագիտական զինանոցի կարևոր գործիքն են: Պրոբլեմային ուսուցման գերագույն նպատակը սովորողների տրամաբանական մտածողության և ստեղծագործական գործունեության զարգացումն է, որը կարելի է իրականացնել պրոբլեմային խնդիրներ լուծելու, պրոբլեմային իրավիճակներ հաղթահարելու միջոցով: Պրոբլեմային ուսուցման էությունը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է, որն արթնացնում ու ակտիվացնում է սովորողների մտածական գործունեությունը:[3]

Ըստ Հ. Ե Շուրկովի մանկավարժական գործունեությունը մանկավարժական բազմաբնույթ պրոբլեմային իրավիճակների բացահայտման, մանկավարժական խնդիրների լուծման բարդ գործընթաց է: Յուրաքանչյուր մանկավարժական իրավիճակի հիմքում հակասությունն է, դրա զարգացումը և հանգուցալուծումը: Այդ պատճառով յուրաքանչյուր իրավիճակ պրոբլեմային է:

Գիտական գրականության վերլուծությունը փաստում է, որ պրոբլոմային իրավիճակում մանկավարժական խնդիրների լուծումը նպաստում է ուսուցիչների հաղորդակցման, համագործակցային կարողությունների, մանկավարժական

---

[1] Подласий И.П. Педагогика: учебник для студентов высших педагогических учебных заведений.- М., 2006

[2] Ասատրյան Լ.Թ. և ուրիշներ, Կրթության համակարգի կառավարման հիմունքները, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Զանգակ-97», 2003, էջ 121

[3] Климов Е.А., Психологиа профессионала: Избранные психологические труды, М., М. О. Д. Е. К., 2003.

կոմպետենտության ձևավորմանը:Պրոբլեմային ուսուցման կիրառման դեպքում մասնագետ մանկավարժը սովորողին պատրաստի գիտելիք չի փոխանցում, այլ ներկայացնում է խնդիրը կամ հարցը, որը պետք է լուծում գտնի և ենթադրում է լուծման համար տարբեր ուղիների որոնում: Ներկայացվող հիմնահարցով մասնագետը ձգտում է հետաքրքրել սովորողին, նրա մեջ հետաքրքրություններ է առաջացնում, որպեսզի նա ուսումնասիրի առկա խնդիրը բոլոր կողմերով և գտնի ճիշտ լուծում, այսինքն՝ տվյալ խնդիրը լուծելու նախաձեռնություն է առաջացնում: Մանկավարժական իրավիճակ կարելի է նախագծել, սակայն շատ հաճախ դրանց ուղղակի կարող են ծագել ուսուցման գործընթացում: Այդ պատճառով մանկավարժական իրավիճակը կյանքի պատմություն է, փոքրիկ դրվագ, որի հետ մանկավարժը կարող է բախվել իր ամենօրյա աշխատանքում: Ցանկացած մանկավարժական իրավիճակի հիմքում կոնֆլիկտն է, հակասությունը:

Մանկավարժական իրավիճակ կարող է առաջանալ եթե առկա է՝

● բացասական վերաբերմունք ինչ-որ բանի կամ որևէ մեկի հանդեպ,

● տարաձայնություն, տարբեր կարծիքներ, տեսանկյուններ,

● հակազդեցություն՝ գործողություն,որը համընկնում է դիմացինի գործողությանը,

● դիմակայում, երբ փորձում են պնդել սեփական կարծիքը կամ ուղղակի հակառակվել:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին

Մանկավարժական իրավիճակների նպատակային լուծման համար բացառիկ մեծ է ուսուցչի դերը, նրա մանկավարժական վարպետությունը: Գիտական հետազոտությունների համակարգված վերլուծությունը հիմնավորում է, որ մանկավարժական իրավիճակների լուծումը փուլային բնույթ ունի: Գիտնականները առանձնացնում են հետևյալ փոխկապակցված գործողությունները.

1) հայտնաբերվող փաստ,

2) կոնկրետ մանկավարժական իրավիճակի նկարագրություն, բովանդակություն,

3) մանկավարժական իրավիճակի վերլուծություն՝ նպատակ ունենալով որոշակիորեն պարզել կոնֆլիկտի բովանդակությունը,

4) գլխավորի և երկրորդականի տարանջատումը,

5) մանկավարժական տեսական և գործնական գիտելիքների նպատակային հարաբերակցում,

6) մանկավարժական խնդրի լուծման ուղիների ընտրություն,

7) ինքնավերլուծություն, գնահատում և ինքնագնահատում: Մենք նպատակահարմար ենք գտնում քննարկել մեր մանկավարժական պրակտիկայի

ընթացքում ծագած մանկավարժական իրավիճակ, որը տեղի ունեցավ տարրական դպրոցում: Հենվելով մանկավարժական պրակտիկայի ընթացքում ձեռք բերված տվյալների, որոշ առումով փորձի վրա՝ ավելի մանրամասն քննարկենք այդ քայլերից յուրաքանչյուրը:

1. Հայտնաբերվող փաստ. Առաջին դասարանում սովորող երեխաներից մեկի մոտ առկա է ակնհայտ ագրեսիվություն, մեծ դժվարություններ կապված դպրոցին հարմարվելու հետ, որը իր ազդեցությունն է ունենում դասարանում իրականացվող ուսումնական գործունեության վրա:

2. Կոնկրետ մանկավարժական իրավիճակի նկարագրություն, բովանդակություն: Իրավիճակը նկարագրվում է իր բոլոր դետալներով, հնարավորության դեպքում ներկայացվում է նաև զրույցը: Յուրաքանչյուր տարիքային շրջափուլին հատուկ է այդ տարիքին բնորոշ մանկավարժական իրավիճակներ:

Երգ և երաժշտության դասի ժամանակ առաջին դասարանում սովորող աշակերտը առանց մանկավարժի թույլատվության կանգնեց, մոտեցավ դասարանի կենտրոնին և պառկեց այնտեղ: Մանկավարժը, ծանոթ լինելով երեխայի մոտ առկա խնդրին, փորձեց նրան ուշադրություն չդարձնել և շարունակել դասը, բայց երեխան հանկարծ կանգնեց մոտեցավ մանկավարժին, այդպես կանգնած մնաց մի քանի րոպե, որից հետո գնաց դասարանի անկյունը և նստեց հատակին՝ ձեռքերով երեսը փակած: Մի քանի րոպե այդպես մնալուց հետո նա կանգնեց, մոտեցավ երեխաներին և սկսեց հարվածել: Դասարանում գտնվող հոգեբանը նրան անհապաղ տարավ դասարանից դուրս և սկսեց հանգստացնել:

Միևնույն ժամանակ դասարանում մանկավարժն էր փորձում երեխաներին հանգստացնել: Երեխայի մուտքը դպրոց ենթադրում է որոշակի դժվարություններ դպրոցին հարմարվելու և նրա կանոններով առաջնորդվելու հետ կապված, որը իր տեղն է գտնում 6 տարեկանի ճգնաժամում:

Քննարկվող օրինակում երեխայի դրսևորած վարքի մեջ մեծ դեր է խաղում հենց այս գործոնը, սակայն չպետք է աչքաթող անել այն միջավայրը, որտեղ ապրել և ապրում է երեխան՝ ընտանիքը: Երբ երեխայի ցուցաբերած վարքի շուրջ զրուցում էինք երեխային դասավանդող մանկավարժների, նրա հետ աշխատող հոգեբանի հետ նրանք մատնացույց էին անում հենց ընտանիքի գործոնը, նշելով, որ արդեն դպրոցում երեք ամիս սովորելով երեխան շարունակում է ցուցաբերել ոչ ադեկվատ վարք, այն դեպքում, երբ երկու ամիսը լիովին բավարար է նման խնդիրը լուծելու համար:

3. Մանկավարժական իրավիճակի վերլուծությունը նպատակ ունենալով որոշակիորեն պարզել կոնֆլիկտի բովանդակությունը. վերլուծությունը պահանջում է պատասխանել հետևյալ հարցերին. ո՞վ է համարվում իրադարձության և զրույցի մասնակից, որն է դրդապատճառը: Մանկավարժական իրավիճակի մասնակիցներն են սովորողները և մանկավարժը: Կոնֆլիկտը կապված է սովորողի դպրոցին չհարմարվելու հետ, որի արդյունքում տուժում է ոչ միայն սովորողը, դասարանը, այլև ընկնում է ուսուցման գործընթացի արդյունավետությունը:
Երեխային որևէ գործողության մղում է ազատ լինելու ձգտումը: Նա պատրաստ չէ պատասխանատվություն վերցնելու իր վրա: Դրա փոխարեն նա նախընտրում է անել ինչ ցանկանում է:

4. Գլխավորի և երկրորդականի տարանջատումը: Իրավիճակի վերլուծության հիմքում ընկած է մանկավարժական խնդրի ձևակերպման հնարավորությունը: Մանկավարժը պետք է կարողանա հստակորեն և ճշգրիտ ձևակերպի այդ խնդիրները, շեշտադրի առաջնային, նախագծի քայլերի ճիշտ հաջորդականությունը: Վերը նշված օրինակում առաջնային խնդիրներից է «բարդ» երեխայի հարմարման գործընթացի պլանավորված կազմակերպումը, հոգեբանական, մանկավարժական աջակցման ապահովումը, սովորողների ուշադրության կենտրոնացումը ոչ թե երեխայի արարքների, այլև դասագործընթացի վրա:

5. Մանկավարժական տեսական և գործնական գիտելիքների նպատակային հարաբերակցում: Անհրաժեշտ է վերհիշել նմանատիպ իրավիճակներ, մանկավարժահոգեբանական գրականություն ընթերցել, որտեղ մանկավարժական իրավիճակը վերլուծում են, եզրահանգումներ կատարում, որոշում մանկավարժական խնդիրը: Ինչպես նաև հաշվի առնել տվյալ տարիքային փուլին բնորոշ տարիքային առանձնահատկությունները, այն մեթոդաբանական մոտեցումները և սկզբունքները, որոնք հենքային են մանկավարժական ներգործության գործընթացում: Այս փուլում հոքեբանամանկավարժական գրականությունից մանկավարժը ուսումնասիրում է 6 տարեկանի ճգնաժամը, ծանոթանում նրա ընթացքը մեղմող միջոցներին[4]:

Ուսումնասիրում նմանատիպ մանկավարժական իրավիճակները, վերլուծում դրանց լուծման տարբերակները: Առավել կարևոր է բովանդակային և ընթացակարգային բաղադրիչների համալիր մշակումը, այսինքն, կառուցել այն քայլաշարը, որը մանկավարժին հնարավորություն կտա հանգուցալուծել առաջացած մանկավարժական իրավիճակը:

[4] Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Երևան, 2005:, էջ 54

6. Մանկավարժական խնդրի լուծման ուղիների ընտրություն. Այս փուլը բավականին բարդ է, քանի որ միևնույն իրավիճակը տարբեր հանգամանքներում, տարբեր գործոնների ազդեցությամբ բազմատեսանկյուն բնույթ է ձեռք բերում: Կարելի է վստահաբար ասել, որ նույնիսկ հարուստ փորձ ունեցող մանկավարժներն են այս փուլում որոշակի դժվարություններ ունենում:

Առկա մանկավարժական խնդիրները դասարանին դասավանդող մանկավարժները և հոգեբանը փորձեցին միասին լուծել: Նրանք նախ կազմակերպեցին հանդիպում, որպեսզի որոշեն իրենց անելիքը: Հանդիպման ընթացքում որոշվեց, որ հարկավոր է ուսումնական գործունեությունը այնպես պլանավորել, որ այն հնարավորին չափով հետաքրքրի «բարդ» աշակերտին: Դասարանում դասաժամերին պետք է ներկա լինի հոգեբանը, որը հարկ եղած դեպքում պետք է աշխատի սովորողի հետ: Պետք է կազմակերպվի նաև հանդիպում դասարանի մյուս անդամների և հոգեբանի հետ:

7. Ինքնավերլուծություն, գնահատում և ինքնագնահատում. Այն բանից կախված, թե որքանով էր արդյունավետ մանկավարժի կողմից ընտրված խնդրի ճիշտ լուծումը, արդյունքների քննարկումը, վերլուծությունը, թերությունների բացահայտումը ապահովում են հետադաձ կապը: Այսպիսով մանկավարժական իրավիճակը մանկավարժական գործընթացի բաղադրիչ է, որի վերլուծությունը և արդյունավետ լուծումը ուսուցչի մանկավարժական կոմպետենտության կարևոր չափանիշ է և տարրական դպրոցի ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման պայման:

Փորձը ցույց է տալիս, որ՝ [5]

- Ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքը պարբերաբար անցկացնելով՝ սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում:
- Ըստ դիդակտիկական նպատակի և բովանդակության տարատեսակ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:
- Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի՝ արագացնում է սովորողների՝ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը, իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:

[5] Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ., էջ 54

• Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տրված առարկայից տրվող տնային աշխատանքների բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարար կարողությունները:

Վերը գրվածից պարզ է դառնում, թե որքան մեծ նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում: Տարրական դասարաններում գործունեություն ծավալելու կարողության ձևավորումը, իսկ այն հնարավոր է իրականացնել սովորողների ինքնուրույն գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք: Այն իր մեջ ներառում է վեց հիմնական փուլեր.

1. կազմակերպչական. Սա երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է:

2. բառարանների, հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում:

Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:

3. նախապատրաստական. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, չխանգարել իր ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:

4. կողմնորոշիչ. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը: Նա ստանալով առաջադրանք՝ ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում է առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար: Երեխաները ծանոթանում են հուշաթերթիկի բովանդակությանը:

Բացի դրանից, այս փուլում,ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը:Պլանը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում է նաև թեմայի շուրջ մշակված պաստառները, սխեմաները և այլն:Այս փուլում ձևավորվում է ուսումնական աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը:

5. հիմնական փուլ. Այս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:

6. ամփոփիչ փուլ.Այս փուլում կատարվում է անցուդարձ:Ուսուցիչը գնահատում է, քննարկում է, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները: Նպատակահարմար է առաջադրանքի կատարման ստուգման համար առանձնացնել ևս մեկ կառուցվածքային փուլ՝

7. ստուգիչ փուլ, որի ընթացքում աշակերտը կատարելով առաջադրանքը՝ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն,այսինքն՝ իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերահսկում: Կազմակերպելով սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ ուսուցիչը պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին.

- Տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի որ փուլում է նպատակահարմար կազմակերպել ինքնուրույն աշխատանքը,

- ինքնուրույն աշխատանքի ինչ տիպ է անհրաժեշտ ընտրել և կիրառել գիտելիքների յուրացման տվյալ փուլում: Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում:

Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը,դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները:Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին:

Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ , հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները: Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով:

Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և , վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն:Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ:Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:

Եզրակացություն

Այսպիսով՝ ամփոփելով կատարված հետազոտությունը կարող ենք գալ հետևյալ եզրակացությանը: Ինքնուրույն աշխատանքի հմտությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան:

Ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատական որակ:Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը: Կարելի է ասել, որ ինչպես դպրոցում, այնպես էլ ողջ կյանքի ընթացքում սովորողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Այսպիսով, ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատատարելագործման համար: Պետք է մշտապես հիշել, որ ոչինչ հաստատուն չէ, բացի փոփոխությունից, քանզի ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերն ու մեթոդները ևս կապված են հասարակական կյանքի պատմական զարգացման հանգամանքների և մանկավարժական նորագույն փորձի ու նվաճումների հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասատրյան Լ.Թ. և ուրիշներ, Կրթության համակարգի կառավարման հիմունքները, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Զանգակ-97», 2003, էջ 121
2. Климов Е.А., Психологиа профессионала: Избранные психологические труды, М., М. О. Д. Е. К., 2003.
3. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Երևան, 2005:, էջ 54
4. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ., էջ 54
5. Подласий И.П. Педагогика: учебник для студентов высших педагогических учебных заведений.-М., 2006